


333.98(47)
U-86

1939



ՀԱՅ Կ (Բ) Կ XVII ԿՈՆՖԵՐԱՆՍ

338.98(47)

Մ-86

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

Կ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՑԱԿԻ
ՄԱՍԻՆ

Ճառ 1
յեղբափակման խոսք
XVII կոնֆերանսում

12212-57

04.07.2013

ՅԵՐԿՐՈՒԹԻ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՄՍ.ՍԻՆ

Ընկերութիւնը, այս փաստը, վոր մեր կուսակցությունը ձեռնարկում է շողավարական տնտեսության յերկրորդ հնդամյա պլանի ինդիքների քննարկմանը, խոսում են իր մասին։ Այդ նախ և առաջ վկայում են, վոր մեր առաջին հնդամյա պլանը կատարվում է հաջողությամբ։ Այս նա վկայում են, վոր մենք լիովին համոգված ենք, թե 1932 թվականը լինելու յեն հնդամյակի ավարտման տարին, թե մենք առաջին հնդամյակին ավարտելու յենք չորս տարում։ Անհրաժեշտ է կանդ առնել ԽՍՀՄ-ում յերկրորդ հնդամյա պլանի մշակման արդ փորտի նշանակության վրա։

Առաջին։ Այդ փաստի միջազգային նշանակության մասին։

Այդ փաստի միջազգային նշանակությունն այն է, վոր ամեն մի յերկրի բանվոր գասակարգը, վոր յուրաքանչյուր պետության աշխատավորությունը հնարավորություն ունի համեմատել կապիտալիստական յերկրներում բուրժուազիայի տիրապետության արդյունքները պրոլետարական դիկտատորայի յերկրում գոյություն ունեցող բանվոր դասակարգի տիրապետության արդյունքների, վեռևէս առաջին արդյունքների հետ։ Ընդումին մենք չենք հրաժարվում համեմատություն դնել տեխնիկական—տնտեսական տեսակետից աշխարհիս ամենաառաջավոր, ամենահարուստ և ամենազոր յերկրների և մեր յերկրի միջև։ Տվյալ պահին, յերբ ճնշաժամն ընդգրկել է կապիտալիստական բոլոր յերկրները և շարունակում ե ամելի ու ամելի խորանալ, քայլայելով արդյունաբերությունը և տնտեսության այլ ճյուղերը, առանձնապես ապացուցիչ արդյունքն է տալիս բուրժուազիան պետությունների և Խորհրդային Միության համեմատումը։ Այդ համեմատումը հնարավորություն և առջիս առանց տատանվելու պատասխանել այն հարցին, թե ո՞ւմ է պատկանում ազագուն՝ պրոլետարիատին ու նրա իշխանությանը, թե՞ բուրժուազիային և նրա տիրապետությանը։ Պարզ է, վոր միջազգային տեսակետից սոցիալիզմի կառուցման, առաջին հնդամյակի իրականացման առզարիզում մեր ձեռք բերած հաջողությունն ու հաղթանակները, այժմ՝ յերկրորդ հնդամյակի ուրվագծումը բոլոր յերկրների բանվորներին և աշխատավորներին ասում են, վոր ապագան պատկանում է վոչ թե բուրժուազիայի տիրապետությանը, այլ պրոլետարիատի դիկտատուրային, վոր փաստերը խոսում են ընդգեմ կապիտալիզմի, հոգուս սոցիալիզմի։

Եերկրորդ։ Ներքին խորհրդային տեսակետից մեր յերկրորդ հնդամյի ինդիքներին անցնելու փաստը նույնպես շատ բան և ասում։ Դա

Պետքանից ապահով
Դաշտի 7124 (Բ)
Պատվիր 596
Տիրաժ 20.000

Թարգմանեց Ս. Զաքարյան—Եմբագրեց Ե. Զոհուրյան

վճռական ստուգումներից մեկն ե՛ թե ինչ ե տալիս բանվոր դասակարդի զեկավարությունը գյուղացիական մասսային բուրժուազիայի իշխանությունը տապահելուց հետո : ԽՍՀՄ-ում համաշխարհային պատմության մեջ առաջին անդամ իշխանությունը գտնվում ե բանվոր դասակարդի ձեռքին, վորոն իր հետեւյց տանում ե դյուլի աշխատավոր մասամբներին և նրանց հետ միասին իրականացնում ե ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցումը սոցիալիստական հիմունքներով : Մեր հաջողությունը, բանվոր դասակարդի հաղթական հաջողությունն այն է, վոր սոցիալիզմի շինարարությունը ծալվում է վոչ միայն քաղաքում, այլև դյուլում, վոր աշխատավորների ամենահետաքաց մասը, դյուլի աշխատավորությունն սկսում ե բարձրանարկելի սոցիալիզմը, դեպի անդասակարդ սոցիալիստական հասարակությունը :

Վերջապես՝ անմիջականորեն տնտեսական տեսակետից, մեր հաջողությունները պլանային սոցիալիստական շինարարության հաջողություններ են : Մինչև այժմ վոչ մի յերկրում, վոչ մի տեղ ամբողջ աշխաբում, չի յեղել պլանային պետական տնտեսություն : Այստեղ մենք սուածին քայլերն ենք անում և արդյունքն ակներեն ե : Խնդիրների մի շարքի լուծումից մենք անցնում ենք նոր խնդիրներին, տարեցտարի մայելի խոչսր խնդիրներին :

Պահային սոցիալիստական տնտեսության հաջողությունը վոչ մեր և նորմնիսկ վոչ այնքան անմիջականորեն մեր տնտեսական պլանային որգանների հաջողությունն ե : Մեր պլանավորումը և հաշվառումը չեն առաջանախակվում այդ համեմատաբար նեղ շրջանակներով : Ինկական տնտեսական աշխատանքը, ժողովրդատնտեսական հաշվառման կազմակերպումը, պլանի մշակումը կարելի յե կատարել և իրականացնում կատարվում ե բանվորական մասսաների ակտիվ մասնակցությամբ, վորոնք յերբեմն մշակման ընթացքում տեղերթում բարականաչափ փոխում են մեր սկզբանական ուրվագծումները : Հենվելով սոցիալիստական շինարարության ասպարեզում բանվոր դասակարդի և աշխատավորության ցուցաբերած այդ ակտիվության վրա, կուսակցության զեկավարությամբ մշակվում են մեր տնտեսական պլանները :

Զի կարելի նաև մոռանալ ժողովրդական տնտեսության պլանի մշակման ասպարեզում կատարված այն հակայական աշխատանքը, վորոնք նախորդում եր յերկրորդ հնդամյա պլանի նախապատրաստմանը :

Ժողովրդական տնտեսության առաջին պլանն եր ելեկտրիֆիկացիայի պլանը՝ ԳՈԵԼՌՈՅԻ պլանը : Նա հանդիսանում ե մեր յերկրի ժողովրդական տնտեսության ընդհանուր տեխնիկական վերակառուցման ռեալիզմի ուժագույնը, սկիզբը, սաղմը : Այդ աշխատանքը մեծագույն

նշանակություն ունեցավ մեր ամբողջ անտեսական աշխատանքի զարգացման համար, պլանավորման գործի զարգացման համար :

Այս մենք դիտենք, վոր ժամանակին մեծ աշխատանք է կատարվել ժողովրդական տնտեսության առաջին պլանները՝ «ժողովրդական տնտեսության ստուգիչ թվերը» կազմելու սապարիդում : Առաջին անդամ հաստատվեցին 1925-26 թ. ստուգիչ թվերը : Այդ ժամանակից սկսած՝ նրանք հաստատվում են ամեն տարի և ավելի ու ավելի մեծ նշանակություն են ստանում տնտեսական զեկավարման համար :

Ժողովրդական տնտեսության տարեկան առաջին պլանները, մշակելու հետ համարյա միաժամանակ, սկսեցին նախապատրաստվել ժողովրդական տնտեսության վերակառուցման ավելի լայն պլանները : Մի շարք տարիների ընթացքում աշխատանք եր կատարվում առաջին հնդամյա նախապատրաստելու համար և միաժամանակ պատրմատվում եր այսպես կոչված ժողովրդական տնտեսության վերակառուցման «դըլիավոր պլանը», նկատի ունենալով 10—15 տարի : Այդ վերջին աշխատանքը չափարարվեց, սակայն քանի վոր մշակվեց և իրականացվեց առաջին հնդամյակը և այժմ մշակվում է յերկրորդ հնդամյակը, քանի վոր այսպես կոչված «դըլիավոր պլանի» հարցերն սպառվում են այդ երկու հնդամյակներով և մասամբ առաջազդրվում են արդեն ավելի ծավալուն ձևով : Այսպես, ուրեմն, յերկրորդ հնդամյակի ուրվագծի նախորդել եր մեծ աշխատանքը, առանց դրան հնդամյոր չեր նախապատրաստել և քննարկել ժողովրդական տնտեսության յերկրորդ հնդամյակի հարցերը :

I. ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՑԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Հնդկերներ, զուք դիտեք, վոր կուսակցությանը ներկայացվեց հընդուրմակի յերկու վարիանտ՝ «յելակետային» և «ոպտիմալ» Պետպլանի կարծիքով ոպտիմալ վարիանտը նկատի ուներ Սորենդրային Միության ամենանպաստավոր պայմանները : Կուսակցությունը վորպես հիմք ընդունեց ոպտիմալ վարիանտը, այսինքն՝ տնտեսական մեծագույն առաջարկանքների պլանը : Հենց նպաստավոր պայմանները նկատի ունեցող այդ ոպտիմալ հնդամյա պլանն ե, վոր կատարում ենք մենք այժմ : Կուսակցությունը կարողացավ հասնել այն բանին, վոր իրենց՝ մասսաների առաջարկած «հնդամյակը չորս տարում» լողունդն իրականացվում է հաղթականորեն : Հնդամյակի վերոհիշյալ ոպտիմալ վարիանտը մենք իրականացնում ենք վոչ թե հնդամյա տարում, ինչպես ուրվագծել ենք նախապես, այլ չորս տարում, այսինքն՝ մի հինգերորդով կրծառում ենք հնդամյա պլանի ոպտիմալ (բարձրագույն) մարիամնտի կուտարման ժամկետը :

Առաջին հնդամյակի հաջողությունները հանդիսանում են խնդարացման քաղաքականության, հետևապես ծանր ինդուստրիայի,

առաջին հերթին՝ արտադրության միջոցների արտադրման բարձրացման քաղաքականության հաջողությունները։ Այդ հաջողությունները բնորոշվում են նրանով, վոր մեջն ներկայումս ունենք սեփական բազա՝ ամբողջ ժաղովրդական տնտեսության տեխնիկական վերակառացումն ավարտելու համար։ ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հետագա աճման համար վճռական նշանակություն ունի այդ փաստը։

Առաջին հնդամյակի հաջողություններն արտահայտվում են նաև կոլեկտիվացման, կողմնահետությունների և խորհանտեսությունների ծավալուն շինարարության բացառիկ հաջողություններով։ Դեռևս յերեկ հետամնաց, ցիրուցան դյուզում այժմ մեքենայական տեխնիկայի հիման վրա կառուցվում ե սոցիալիստական խոշոր տնտեսությունը։ Մենք արդեն հասել ենք այն դրությանը, վոր նաև գյուղատնտեսության ապագարիզում տիրապետող դիրք են գրավում սոցիալիստական ձևերը։ Դրանով լուծված ե պրոլետարական հեղափոխության ամենատժարին և ամենակարեւոր խնդիրը։

Վորքան ել մեծ, ուղղակի վիթխարի լինեն յերկրորդ հնդամյակի խնդիրները, չի կարելի մոռանալ, վոր Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ամենալժվար խնդիրն ե՝ վերակառուցել դյուղատնտեսությունը կուեկտիվոմի և մեքենայական բարձր տեխնիկայի հիման վրա։ Հենց այդ խնդիրն ե, վոր հաղթականորեն իրականացնում եր և իրականացնում և կուսակցությունը, և չի կարող վոչ մի տարակուր լինել, վոր 1932-33 տարում ԽՍՀՄ-ում կոլեկտիվացումը հիմնականում կավարտվի։

Այդ բոլորը կուսակցությանը հնարավորություն տվեց առելու, վոր լինինյան հիմնական «ոլո՛ում» հարցը լուծվեց կապիտալիզմի գեծ լուծվեց հոգուտ սոցիալիզմի։ Դա կարեւորագույն արդյունքն ե վոչ միայն անտեսական, այլև քաղաքական այն ամբողջ զարգացման համար, վոր առեցել և ԽՍՀՄ-ն անցյալ ցընանում։

Չի կարելի չտեսնել, վոր այս տարիներին ամեն ինչ ուրվագծված պլանով չեր կատարվում։ Կուսակցությունն առաջին հնդամյակի մեջ փոփոխություններ մտցրեց վոչ միայն ըստ առանձին տարիների, այլև ամբողջի մեջ։

Իերենք մի քանի որինակներ։

Հնդամյա պլանում չեր ուրվագծված, վոր նույնիսկ հնդամյակի վերջում գործադրկությունը լիովին վերացվելու յե մեր յերկրում։ Այս, հնդամյա պլանն ուրվագծում եր գործադրկության հսկայական կրծատում, սակայն այն ժամանակ, հնդամյա պլանի ընդունման ժամանակ, անհնարին եր նախատեսել, վոր ԽՍՀՄ-ում գործադրկությունը վերացվելու յեր արդեն 1930-31 թվին։ Ինչպես տեսնում ենք, մենք մի քիչ խախտել են պլանային ուրվագծիծը, սակայն կարելի յե հուսալ, վոր պլանի այդ փոփոխումը, ավելի շուտ՝ բարելավումը կատար-

վամ և ամբողջովին հոգուտ բանվոր դասակարգի և նրա կողմից ընդունվում և կատարյալ համականգով։

Առաջին հնդամյակի տնտեսական խնդիրների նկատմամբ կաւակցությունը մտցրեց այնպիսի մեծ փոփոխություն, ինչպիսին ե մետաղաձուլական նոր բարձրական սուհակարգություն Արևելքում՝ Ուրալո-Կուղնեցկի ըրջանում։

Արեւելքի յերկրորդ մետաղաձուլման բարդայի մասին հնդամյա պլանի չորս հատորներից վոչ մեկում վոչ չի ասված, սակայն միթքե կարելի յե այժմ քննարկել առաջն հնդամյակը, առանց խսելու ուրալո-կուղնեցկի շրջանում մեր ստեղծած մետաղուրդիական նոր բարձրական մասին։ Իհարկե չի կարելի։ Առավել ևս այժմ, յերբ գործարկվել ե առաջին հալոցը Մադնիտովորսկում և հերթը գալիս ե նոր հալոցների գործարկմանը Մադնիտովորսկում ու Կուղնեցկում։ Այլպիսով, այստեղ ևս ուղղում ե մտցված հնդամյա պլանում, բայց լավ աւղածմ, վորի գետ ԽՍՀՄ-ի վոչ մի բանվոր վոչ միայն չի առարկում, այլ, ընդհակառակին՝ ամեն կերպ ուժանդակում է։

Հնդամյակը նախատեսում եր կուեկտիվացման վորոշ տեմպ, գուրք յեկավ այլ տեմպ։ Մենք վաղուց արդեն անցել ենք կուեկտիվացման, խորհանակությունների ծավալման այն տեմպից, վորոնք ուրվագըծված եյին հնդամյակում։ Այդ ևս երական ուղղում ե մտցնում հնդամյա պլանում, սակայն դա վատ ուղղում չե, այլ այնպիսի ուղղում, վորը լուրջ կերպով բարելավում ե գործը։ Գյուղացիության միլիոնավոր մասսաները, ել չենք խոսում բանվոր դասակարգի մասին, չեն առարկում այդ «ուղղումների» գեմ, վորպես կուսակցության քաղաքականությանը, լինինիզմին լիովին համապատասխանող ուղղումներ։

Դժբախտաբար չի կարելի ասել, վոր հնդամյա պլանում մեր մտցըրած ուղղումները կատարվել են միայն գեպի լավը։ Մեղ մօտ վորոշ բան կատարվեց նաև ընդհակառակին։

Չի կարելի, որինակ՝ մոռանալ հետեւյալ յերեք պարագան։ Մենք չկատարեցինք արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու առաջադրանքները։ Դա մեր հսկայական բացն ե։ Պարզ ե, վոր մենք վոչ մի չանք չսկեաք ե խնայենք ուղղելու այդ գործը, հենվելով պրոլետարական կարգավահության ամբացման, անինիկայի բարձրացման, մեր կադրերի կողմից տեխնիկայի ամբակետման վրա։

Հնդամյակի ուրվագծումները մենք չկատարեցինք նաև բերքատվության բարձրացման վերաբերմաբ։ Այստեղ մենք մինչեւ այժմ դանում ենք շատ ցածր մակարդակի վրա, զգալիորեն ավելի ցածր, ան պահանջում ե հնդամյակի ուրվագծիծը։ Պարզ ե, վոր այդ բնագավում ևս պետք ե առաջ մղել ճակատը և ուղղել գործը։

Մենք չկատարեցինք և ամեն որ գդում ենք, վոր չենք կատարել տրանսպորտի, մանավանդ յերկաթուղային տրանսպորտի վերակառուցման խնդիրը։ Ակներև ե, վոր այդ բնադրավառում մենք պետք ե շատ և համառորեն աշխատենք՝ ամելի շուտ դորձը բարելավելու, մեր տրանսպորտը պատշաճ բարձրության հասցնելու համար։

Հնդամյակի արդյունքները քաղաքական տեսակետից բարձրար չափով լուսաբանված չեն լինի, յեթե չչոչափենք այն հարցերը, թե ի՞նչ պայմաններում ե ծավալիվ կուսակցության պայքարը հնդամյակը կատարելու համար, թե ինչպիսի քննադատությամբ և հակառաչարկներով եյին հանդես գալիս ուղղիցին խմբակները թի՛ տրոցկիստական, և թի՛ աջ ուկլոնիստական։

Անցյալի դասերն առաջնակարդ նշանակություն ունեն կուսակցության և ամբողջ բանվոր դասակարդի համար։ Ուստի անհրաժեշտ և հիշեցնել թեկուզ կարեւրադույն մոժենտներն այն պայքարի, վոր մղել և կուսակցությունն այսպէս կոչված «ձախ» և աջ ուկլոնիստների դեմ։ Սուպել ևս այն պատճառով, վոր մեր պայքարն այդ տեսակ թեքութների, մանավանդ գլխավոր՝ աջ վտանդի դեմ, անխուսափելի յև նտեւ հետապայում։

Ես հիշեցնում եմ, վոր առաջին հնդամյակի դիրեկտիվները կենտրոնական կոմիտեյի կողմից ընդունվեցին կուսակցության XV Համագումարից առաջ և քննարկվեցին այդ համարդումարում։ Տրոցկիստական ուղղիցիան առաջին հնդամյակի թեղիսների դեմ հանդես յեկավ իր հակաթեղիսներով։ Դա մի ստվարածավալ փաստաթուղթ եր մինչև ուղնութուծը թափանցված կուսակցությանը թշնամի գծով, պարունակում եր կենտրոմի դեմ ուղղված կարծես բոլոր մեղադրանքները, վոր կարելի յև միայն պատկերացնել։

Ապա հիշեցնեմ, վոր աները, արդեն այն պահին, յերբ 16-րդ կուսակնֆերանսում ընդունում եյին հնդամյա պլանի թեղերը՝ փորձեցին հանդես գալ իրենց հակապլանով։ Արդեմ մատնանշել թեկուզ այսպէս կոչված «յերկամյակը», վորը քողարկված ձեռով հակադրվում եր հընդամյա պլանի մասին կենտրոմի ընդունած վորոշմանը և ըստ եյության հակադրվում եր կուսակցության քաղաքական գծին։

Այդ բոլորի մասին բավականաչափ խոսվել և ժամանակին։ Այժմ կարեւոր և անցյալի իրադարձությունները դիտել այն արդյունքների տեսակետից, վոր տվել և մեր ոսցիալիստական շնարարությունը վերջին 3-4 տարում։ Այդ հապակցությամբ յես միքանի քաղաքածքներ կանեմ որոշկիստական և աջ ոպորտունիստական դամանանքին պատկանող ոպողիցիոններին յելույթներին վերաբերյալ փաստաթղթերից։

Վերցնենք արդյունաբերության հիմնական շինարարության հարցը, վոր, ինչպէս հայտնի յե բոլորին, քաղաքական մեծագույն նշանա-

կություն ունի ինդուստրացման քաղաքականությունն իրականացնելու համար։ Ահա թե ինչ էյին գրում արոցկիստներն իրենց հակաթեղերում հնդամյա պլանի մասին մեր կենամկամի ընդունած թեղերի առթիվ—

«Տալի՛ս են արդյուք նրանք (թեղերը) ինքնուրույն պլան՝ լուծելու արդյունաբերության հիմնական ներդրումների արմատական հարցը։ Վոչ։ Յեւ դրանով նրանք նպաստում են, վոր դորձնականում ավելի ու ավելի հաղթանակում են հակապրոլետարական տենդենցներ մեր տրնտեսության սոցիալիստական և կապիտալիստական տարրերի հարաբերության հիմնական հարցում»։

Տրոցկիստական պլատֆորմի համաձայն, դուրս եր գալիս, վոր հնդամյակի մասին կուսակցության ընդունած թեղերը տանում եյին դեղի «հակապրոլետարական տենդենցների հաղթանակը»։ Ծիծաղելի չե՞մ միթե կարդալ այդ չորս տարի հետո։

Ի՞նչ եյին ասում արդյունաբերության հիմնական շինարարության մասին մյուս թեկից, աջ թեկից։

Աջ կողմից, ճիշտ և, բավականին խճճված ձեռով, բայց պարզ արտահայտված քաղաքական տենդենցներով մոտավորապես ասում եյին այսպես։

«Զի կարելի գործը հասկանալ այնպէս, վոր արդյունաբերության ներդրումները շարունակ ածելու յեն յերկրաչափական պլրոգրեսիայով մինչև ծավալուն կոմունիստական իրավակարդը հասնելը. հնարավոր և նաև ներդրումների կորադի իշեցումը»։

Մի խոսքով, աջերը «կորագծի» վրա մի կողմ եյին շեղվում (Ծիծաղ)։

Այժմ վերցնենք այն, ինչ վերաբերում է դրույին։ Ի՞նչ եյին ասում տրոցկիստական ոսղողիցիայի հակաթեղերը կուսակցության՝ դրույի քաղաքականության մասին։ Ահա թե ինչ։

«Կենտրոմի թեղերը միանգամայն սիրալ են մեկ փակագծի մեջ դնում կապիտալիզմը քաղաքում և կապիտալիզմը դյուզում, պնդելով, վոր ազգարային կապիտալիզմը ևս զարգանում և միայն բացարձակապես։ Իսկ իրականության մեջ զյուզում կապիտալիզմն աճում և և բացարձակապես, և՛ հարաբերականորեն, աճում և մեծ արագությամբ, որեցոր ավելանում և խորհրդային պետության և նրա արդյունաբերության կախումը դյուզի կուլակային-ունեոր մասի հումքային և եքսպորտային ուսուրաներից»։

Յեւ ապա՝

«Արագորեն աճում են հողագործության կապիտալիստական տարրերը, մասր ապրանքային արտադրության բազայի վրա։ Դրա չնորհիվ աճում և պետական տնտեսության կախումը կուլակային կապիտալիստական տարրերից, հումքի, եկամուտի և պարենային պաշարի ասպարիզում»։

Այժմ կարիք չկա զբաղվել տրոցկիստական այդ հայտարարությունների մանրամասն քննությամբ։ Հարց տայինք կուլակությանը, թե այժմ, հնդամյակի յերեք տարին լրանալուց հետո, շարու կախում արդյոք մենք նրանից, թե՞ նա ավելի կախում ունի Խորհրդակին իշխանությունից (ծիծաղ)։

Մյուս՝ աջ թևից՝ որ-ալուր ծամծմում եյին, թե՝ «Հայի հիմնական աղբյուրը գեռ յերկար ժամանակ հանդիսանալու յեն դյուլացիների անհատական տնտեսությունները», ուստի դանդաղեցրեք ձեր արշավը կուլակի վրա։ Ինչպես հայտնի յե, անհատականները չհամաձայնեցին աջ ուկլոնիստների հետ և մասսայորեն մտան կոլտնտեսություններն արդեն 1929 թ.։ Մենք բոլորս ել լավ դիտենք, թե ինչպես կատարվեց այդ, ուստի յես կսահմանափակվեմ այսքանով։

Սակայն, վերջիվերջո զլիսակորն այն ե, վոր «Ճախ» և աջ ոսպոդիշիներները խոսում եյին պրոլետարական հեղափոխության հեռանկարների մասին ամբողջապես վերցրած։ Հիշեցնենք դրա մասին ևս։

Տրոցկիստների հակաթեղերում դարպացված եր յեկրչուտ միտք՝ «Երկիշխանության» սաղմի առաջացման մասին, վորն «սպառնում ու պրոլետարիատի դիկտուրային» (ընդդուռը բնադրին և)։ Հայտնի յե, վոր տրոցկիստները մեր կուսակցությանը մեղադրում եյին այն բանում, թե նա գործը տանում ե դեպի «Տերմիդորը», այսինքն՝ դեպի հեղափոխության կործանումը։ Թե ի՞նչ գուրս յեկավ այդ մարդարեյությունից, կարելի յե տեսնել թեկուզ առաջին հնդամյակի կատարմանը վերաբերող փաստերից և յերկորդ հնդամյակի համար մեր ուրվագծած խնդիրներից։

Միենույն ժամանակ մյուս, աջ թևից խղճալի ճայնով կրկնում եյին մոտավորապես հետելյալը. «Յափն ել հենց այն ե, վոր այն ամենը, ինչ մենք կառուցում ենք, այդ բոլոր գործարանները շատ շուտով կարող են սպիտակ գվարդիականների բաժինը դառնալ»։ Գուցե մի քանի տըիմար սպիտակ գվարդիականներ վորեե բանի վրա հույս դրել եյին դրա առթիվ, սակայն առավել ևս մեծ հիսաթափություն եր սպասում նրանց հետագայում։ Բայտ եյության դա կրկնություն եր տրոցկիստական նույն այդ մտքի՝ «Տերմիդորի» մասին, միմիայն այլ ձեռվով։ Հայտնի յե, վոր աջերը կանդ չեյին առնում նույնիսկ կոսակցությունը «գյուղացիության ռազմա-ֆեոդալական շահագործման» մեջ մեղադրելու առջեւ, դրանով իսկ կրկնելով միլյուկովականների զըրպարտությունը լինինյան կուսակցության դեմ։

Տրոցկիստների և աջերի գոկումնտներին ու յելութներին վերաբերյալ մեր բերած քաղվածքները մատնանշում են նրանց քաղաքական պլատֆորմների ամենաբնորոշ տարրերը։ Այդ պլատֆորմների վիճումն այնքան ակներեւ ե, վոր այժմ մենք նրանց այն ժամանակվա հայտարարություններին պատասխանում ենք սոսկ ծիծաղով, սակայն իր ժամանակ

նաևին կուսակցությունը հարկադրված եր շաբունակ կատաղի պայքար մղել «Ճախ» և աջ ոսպորտունիստների դեմ։

Ուրեմն, ի՞նչպես բացատրել այն հանգամանքը, վոր այն շրջանում, յերբ կուսակցությունը հաջող ծավալում եր սոցիալիստական շինարարությունը և արագորեն առաջ եր ընթանում՝ հակառակ կապիտալիստական տարրերի դիմադրությանը, այդ շրջանում նրա մեջ գտնվեցին խմբակներ, —վորոշ ժամանակով նույնիսկ բավականաչափ զգալի խըմակներ, վորոնք պայքարի բոլովեցին կուսակցության հետ, առանց ինային լուր այդ պայքարը վորոշ կուսակցությունը վոչ խոսքը, վոչ ել իրենց պատիվը։

Այնինչ, հենց չնորհիվ այն հանգամանքի, վոր սոցիալիզմն այն ժամանակ արդեն խոչըրագույն հաջողություններ եր ձեռք բերել, հաղթականորեն դուրս մղելով կապիտալիզմի մնացորդները։ Հենց այդ պատճառով առաջ յեկան մեղ մոտ մանր-բուրժուական խավերի տատանումներն արտացոլող ոպողիցին հոսանքներ։ Թե՛ «Ճախ» և թե՛ աջ ոսպոդիցին այդ հոսանքները համապատասխանորեն արտացոլում եյին բուրժուատկան այն տարրերի ձնչումը, վորոնք հասկանալի պատճառներով դիմադրում եյին կուսակցության քաղաքականությանը և վորոնց տրամադրությունները նրանց միջոցով յուրահատուկ արտահայտություն եյին զանում նույնիսկ մեր կուսակցության մեջ։

Պատահական և միթե այն փաստը, վոր հենց այն տարիներին, յերբ կուսակցությունը հաջողությամբ դուրս եր մղում մասնավոր կապիտալը քաղաքի՝ նրա վերջին ապաստանից՝ առեւրից, ինչպես և տնայնազործական արտադրությունից, հենց այդ շրջանում ոպողիցիա բարձրացավ կուսակցության քաղաքականության դեմ։ Տրոցկու գլխավորությամբ։ Տրոցկին և նրա կողմանակիցներն իրենց բուրժուական տենդենցներն սքողելու համար, հարկադրված եյին ոսպովել «Ճախ» Փրազների, «գեղեցիկ» ժեստերի ժողովածուով։ Այդ թակարդն ընկնում եյին յերբեմն քաղաքականության մեջ նայիվ, սակայն կուսակցությանը մոտ վորոշ տարրեր ևս։ Բայց տրոցկիստական «աղատաֆորմի» բուն եյությունը բնորոշվում եր անվստահությամբ դեպի բանվոր գասակարգի հաղթանակի հնարավորությունը կապիտալիստական տարրերի վրա՝ այլայլ պայմաններում։ Նրանք չեյին հավատում սոցիալիզմի շնարարությանը ԽՍՀՄ-ում։ Այդ՝ տրոցկիստներին փառատորեն տանում եր դեպի կապիտուլիացիա՝ բուրժուատկան տարրերի հանգեց։ Տրոցկիստները սոսկ մունետիկներն եյին հանդիսանում նաև և առաջ առեւրի սպարերի պատասխանում զործող այն մասնավոր կապիտալիստական տարրերի, վորոնք հատկապես 1925-27 թ. թ. շրջանում արագորեն դեպի հատակն եյին ընկղմում։

Ապա միթե պատահական և այն, վոր հատկապես այն շրջանում,

յերբ արշառվ ծարվալեցինք դյուղի կապիտալիզմի վերջին հենաբանի կուլտի վրա, հենց այդ ըրջանում մեր դեմ հանդես յեկալ աջ ու կլոնիստական ոպողիցիս: Իսկ իրականում մենք դժուենք, վոր այդ ոպողիցիսն ևս հանդիսանում եր նախ և առաջ մեր դյուղի կործանվող բոլոր ուսական-կուլտակային տարրերի յուրահատուկ վողը: Այսինչ, կուլտակության և նրա հետ կապված բուրժուական ինտելիգենցիայի դիմադրությունն այնքան մեծ էր, մանավանդ 1928-29 թ. թ., վոր տիյն ժամանակ աջ ոպորտունիստական ոպողիցիսն զլիսավորում ելին մեր կուլտակության աչքի ընկնող անդամները:

Կյանքն արդեն հիմնականում տվի և ուղորտունիզմի յերկու դյուազբ տեսակների դեմ մզլող պայքարի հանրագումարը:

Տրոցկիզմը զրավեց բուրժուական հականեղափոխության ավանդաբի տեղը, դառնալով նրա համար գաղափարներ մատակարարողներից մեկը՝ պրոլետարական հեղափոխության դեմ պայքարելու համար: Աջ ոպորտունիզմը, վորտես պրոլետարիատի վրա գործարող բուրժուական ամենաբացորոշ արտահայտությունը, դարձավ «իդեոլոգիական արժեքների» զլիսավոր մատակարարողներից մեկը մեր դասակարգային թշնամիների համար: Կուսակցությունը մեր կացնելով հականինյան այդ յերկու թեքումներն ել, ժամանակին հարց դրեց, վոր թե՛ տրոցկիստական և թե՛ աջ ոպորտունիստական հայցքներ ունենալն անհամաժեղելի յե կուսակցության շարքերում մնալուն:

Կուսակցությունը հականինյան հոսանքների դեմ իր մղած պայքարում կոփվեց, աճեց և բարձրացար մի աստիճան ևս: Դա մեր հետապա հաջողությունների վճռական նախադրյալներից մեկն էր:

Վ. ՅԵԿԻՐՈՒԹ ՀՆԳԱՄՑԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՐՔԱՆԱՐՈՒՍԻՄԸ

Յերկրորդ հոգածյակի քաղաքական դիրքավորումը թեղերում տըր-ված և հետևյալ ձևակերպումով.

«Յերկրի հսկայական բնական հարստությունները, սոցիալիստական շինարարության բայցևելյան տեմպը, բանվորների և կոլտնտեսականների լայն մասաների հարածուն ակտիվությունը, կուսակցության ճիշտ գիծը, լիովին ասպահովում են սոցիալիստական տնտեսության արտադրողական ուժերի այնպիսի ծավալումը, յերկրորդ հնդամակում, վորի հիման վրա, վերջնականապես վերացվելու յեն կապիտալիստական տարրերը ԽՍՀՄ-ում: Կոնֆերանսը գտնում է, վոր յերկրորդ հոգածյականի հիմնական քաղաքական բնողիրն է վերջնականապես լիկ-վերացյիայի յենթարկել կապիտալիստական տարրերը և դասակարգերն ընդհանրապես, լիովին վոչչացնել դասակարգային տարբերություններ ու շահագործում առաջացնող պատճառները, հաղթահարել կապի-տակիզմի մեացորդներն եկոնոմիկայում ու մարդկանց դիտակցության 12

մեջ և դարձնել յերկրի ամբողջ աշխատավոր աղքարնակությունը սոցիալիստական անդամակարդ հասարակության դիտակից ու ակտիվ կառուցողներ:

Պորտարույժ դասակարգային տարրերի վերացման և ժողովրդական յեկամտի ընդհանուր աճման հիման վրա, յեկամուտ, վորն ամբողջովին անորինվում և աշխատավորությանը, պետք և ձեռք բերենք բանվորական և դյուղացիական մասսաների բարեկեցության ավելի արագ վերելք: Կոնֆերանսը գտնում է, վոր 2-րդ հնդամյակի վերջերին ապասովական հիմնական ապրանքների, վորոնց թվում նաև սննդի առարկաների մատակարարության աղդաբնակությանը պետք և ավելանա առնվազն 2-3 անգամ՝ համեմատած առաջին հնդամյակի վերջին արդյական համար 2-3 անգամ՝ համեմատած առաջին հնդամյակի վերջին արդյական համար:

Թեղերից բերված այս քարվածքը լիովին աալիս և յերկրորդ հընդամյակի քաղաքական դիրքավորումը: Ինձ կմնա կանոն առնել այդ քաղաքածքի միայն ամենահիմնական դրույթների վրա:

Ակսեմ ԴԱՍԿԱՐԳԱՅԻՆ ՅԵՎ ԴԱՍԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅԱՐԱՐԻ հարցից: Թեղիսներում ասված է, վոր 2-րդ 5-ամյակի հիմնական քաղաքական խնդրին և վերաբերում «կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերջնական վերացումը» և «յերկրի ամբողջ աշխատավոր ապարանակության վերածումը սոցիալիստական անդամակարդ հասարակության դիտակից ու ակտիվ կառուցողների»:

Այդ խոսքերն արտահայտում են յերկրորդ հնդամյակի քաղաքական դիրքավորման ամենագլխավոր տարրը:

Մարքսիզմ-բնինիզմը սովորեցնում է, վոր սոցիալիզմը դասակարգերի վերացումն է, վոր սոցիալիզմը անդամակարդ հասարակության առեղծումն է: Այլպիսով մեջ բերված խոսքերով ձևակերպված և սոցիալիզմի կառուցման խնդիրը:

Ճիշտ ե դրված այստեղ արդյոք խնդիրը դասակարգերի վերաբերությար: Իժագործելի՞ յե արդյոք դասակարգերի վերացման խնդիրը, ինչպես գրված և վերջինս կենտումի թեղիսներում: Յես կարծում եմ, վոր վոչ միայն ճիշտ և, վոչ միայն իրազործելի յե այդ խնդիրը, այլև յերկրորդ հնդամյակի խնդիրների միայն քաղաքական այդպիսի դըրվածքն է, վոր բղխում և կուսակցության քաղաքականությունից և մարքսիզմից:

Գլխավոր հարցը, վոր պետք և քննել այս դեսպում, այն և, թե վորքա՞ն ճիշտ է, վոր մենք յերկրորդ հնդամյակում կարող ենք զնել կապիտալիստական տարրերի վերջնական լիկիդացիայի խնդիրը: Դրանումն և հարցի երությունը:

Յեթե այդ կողմից քննենք դասակարգերի հարցը յերկրորդ հնդամյակում, ապա այն ժամանակ, և միայն այն ժամանակ, կարելի կլին հենեւեաանեւ, հասու ուսմածքը և ասանուալ պարզ, բարյեկի համար

Հերավի, քննենք հիմնական փաստերը:

Փողովրդական տնտեսության 1932 թ. այն պլանը, վոր ընդունելը և կուսակցությունը, յենթադրում են, վոր արդեն առաջին հնդամյակի վերջում Խորհրդային Միության ժողովրդական յեկամտի մեջ ամբողջ մասնավոր հատվածը կազմելու յն 10 տոկոսից պակաս: Հետևյալ փաստը: Մեղ մոտ արդեն կոլեկտիվացել ե գյուղացիական տնտեսությունների ավելի քան 60 տոկոսը, և վոչ մի տարակույս չի կարող լինել, վոր կուսակցության առաջադրած խնդիրը՝ 1932—1933 թվականներին հիմնականում ավարտել կոլեկտիվացումը ԽՍՀՄ-ում, կերպործվի: Չե՞ վոր այդ նշանակում ե, վոր արդեն մոտակա 2 տարում, համատարած կոլեկտիվացման հիման վրա, իրականացվելու յն դյուդի կապիտալիստական տարրերի հիմնական մասի վերացումը: Վերջապես դրան ամելացրեք այն, վոր խոշոր արդյունաբերության կապիտալիստական տարրերն արդեն վաղուց կոչնչացել են, իսկ մանր արդյունաբերության և առևտուրի մեջ նրանց գերն արագորեն փոքրանում ե: Հետեւ պատճեն, վոչ մի տարակույս չի կարող լինել, վոր 2-րդ հնդամյակում կուսակցությունը կարող ե և պետք ե դնի իր առջև կապիտալիստական տարրերի վերջնական լիկվիդացիայի խնդիրը:

Բայց մեղ կասեն—կապիտալիստական տարրերին խնդրեմ վերջնականապես լիկվիդացիայի յենթարկեցեք, բայց ինչ կանեք ընդհանրապես դասակարգերի լիկվիդացիայի հետ: Այնինչ, հարցի այդպիսի դրվածքում կա ներքին կոպիտ հակասություն, վորը մեծ շփոթություն է առաջացնում:

Ինչպես հայտնի յե, սոցիալիզմի հիմնական խնդիրն ե վոչնչացնել կապիտալիզմը, այլ խոսքով՝ վոչնչացնել դասակարգերը, այսինքն վոչնչացնել մարդու շահագործումը մարդու ձեռքով: Դրանից հետևում է, վոր կապիտալիստական տարրերի լիակատար վերացումը նշանակում է շահագործողների դասակարգերի վերացում, իսկ առանց շահագործողների՝ չկան շահագործվողներ:

Թեզիսներում ասված ե, վոր անհրաժեշտ ե «լիովին վոչնչացնել դասակարգային տարրերություններ և շահագործում առաջացնող պատճառները»: Ինչո՞վ պետք է արտահայտվի այդ: Մենք, բայց լինենք, լավ դիտենք, թե այդ ինչումն ե արտահայտվում, քանի վոր բայց լիկվիդի կատարեցին սոցիալիստական հեղափոխությունը, վորն ըստ կազմում ե արտադրության միջոցների, այն ե՝ հողի, գործարանների, ֆարբեների և այլ ձեռնարկությունների հասարակության, պետության ձեռքն անցնելով: Մարդու կողմից մարդու շահագործման մեջ հիմնականն ե այն, վոր արտադրության այդ միջոցները պատճառում են առանձին մարդկանց և այդ միջոցները չունեն մյուս մարդիկ: Այդ բաժանում ե մարդկանց դասակարգերի և ծնում ե շահագործումը:

Մենք դիտենք, վոր խոշոր արդյունաբերության և հողի վերաբերմամբ արտադրության միջոցների անցումը պետության ձեռքը տեղի յե ունեցել վաղուց: Նա այժմ տեղի յե ունենում կապիտալիստական տարրերի վերջնականապես վերացմամբ և լիովին կավարտվի նաև տնտեսության մյուս բոլոր ճյուղերում: Դրանով իսկ կերականացվի դասակարգային տարրերություններ և շահագործում առաջացնող պատճառների վոչնչացնումը:

Այս բոլորից հետո պարզ ե, վոր կապիտալիստական տարրերի վիակատար վերացումը, դասակարգային տարրերություններ և շահագործում առաջացնող պատճառների կատարյալ վոչնչացնումը միաժամանակ նշանակում ե ընդհանրապես դասակարգերի վերացում: Յեթե չկան կապիտալիստական տարրեր, այսինքն չկան շահագործողներ, յեթե լիովին վերացված են դասակարգային տարրերության աղբյուրները, ապա ինչպի՞սի դասակարգերի մասին կարելի յե խոսել այն ժամանակի: Այն ժամանակ բարիս բուն իմաստով դասակարգերի մասին արդեն չի կարելի խոսել: Հետեւ պատճեն ով յերկրորդ հնդամյակի խընդիրն ե համարում կապիտալիստական տարրերի լիակատար վերացումը, նա միաժամանակ անխուսափելիորեն պետք ե դնի՝ ընդհանրապես դասակարգերի վերացման խնդիրը:

Հարկավ՝ կապիտալիստական տարրերի վերացումը դուդակցված ե հսկայական դժվարությունների հետ, կուլակության և ընդհանրապես բուրժուական տարրերի դիմադրության հուսահատ վորձերի հաղթաման հետ:

Դասակարգային պայքարը վոչ միայն չի դադարում, այլև առանձին ճակատամասերում, առանձին շրջաններում կարող ե զգալիորեն սրվել և կրվի: Կապիտալիստական տարրերի լիակատար վերացումը հնարավոր և միմիայն մինչեւ վերջը հասցնելով բայց լիկվիդացիան ծավալուն արշավի քաղաքականությունը, վոր հաղթանակում ե բոլոր և ամեն տեսակի դժվարությունները, համախմբում ե բանվոր դասակարգի շուրջը դյուդի աշխատավորության ամեանլայն մասսաներին՝ կուլակի դեմ, բոլոր բուրժուական կապիտալիստական տարրերի դեմ:

Դասակարգերի վերացման հարցի մեջ մինչև այժմ ել քիչ չեն սիսեմատիզմի տարրեր, վոր վոչ մի առնչություն չունեն մարդսիզմի և նրա զարգացման տեսության հետ: Սակայն սիսեմատիկ պատկերացումներն այստեղ են տանում են գեղի մեծ շփոթություն և կոպիտ սիսալներ:

Ուստի անհրաժեշտ ե, այելի մանրամասնորեն կանդ առնել դասակարգերի վերացման խնդիրների վրա:

Սկսեմ բանվոր դասակարգի հարցից:

Մարքսիստների համար պետք ե պարզ լինի, վոր այն ժամանակից, յերբ բանվոր դասակարգն իր ձեռքը վերցրեց իշխանությունը և

իրեն յենթարկեց արտադրության բոլոր միջոցները՝ խոշոր արդյունաբերությունը, հողը, արանապրոտը և այլն, այդ ժամանակից ի վեր նապայիս պրոլետարիատ չե բառիս բուն իմաստով, ինչպիսին եր նա կապիտալիստական հասարակության մեջ: Պրոլետարիատը կապիտալիստական հասարակության մեջ զրկված է արտադրության գործիքներից, դրա համար ել շղթաբլած է բուրժուական շահագործման կապանքներով: Կապիտալիզմի պայմաններում պրոլետարիատի դրությունը հասարակական ճնշված ու շահագործվող դասակարգի դրություն ե: Բուրժուազիայի իշխանության տապալումով և նրանից արտադրության միջոցների խլումով, բանվոր դասակարգը պետության մեջ դառնում է տիրապետող ուժ: Այդ բովելից նա ակտում է կապիտալիստական տարրերի վերացումը և հող է պատրաստում ընդհանրապես դասակարգեր վերացնելու համար:

Այն ժամանակից, յերբ յերկրի բանվոր դասակարգը 1917թ. հոկտեմբերին տարավ ամբողջ աշխարհի պատմության մեջ մեծագույն հաղթանակը բուրժուազիայի դեմ, այն ժամանակից՝ ահա արդեն յերկրորդ տարանամյակին ե, վոր ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը վոչ միայն աղասիլեց կապիտալիստական տարկություննից, այլև դարձավ տիրապետող դասակարգ, սոցիալիստական նոր հասարակություն կառուցակարգ:

Պրոլետարիատի պատմական դերը վոչ միայն այն է, վոր նա հանդիսանում է բուրժուական հասարակության գերեզմանափորը, այլև այն, վոր նա հանդիսանում է սոցիալիստական նոր հասարակություն կառուցակարգը: Դրանով իսկ այն պետությունը, վորին ստեղծում է բանվոր դասակարգն իր հաղթանակից հետո, ովտագործվում է իրականացնելու կապիտալիստական տարրերի և դրա հետ միասին ընդհանրապես դասակարգերի վերացումը: Կապիտալիստական տարրերի վոչընչացման դուդընթաց, վոչնչացվում են հասարակության դասակարգացին ամեն տեսակ բաժանումների արժաները, հետեւալես նախավարսատվում է բոլոր դասակարգերի և դրանով իսկ իրեն՝ բանվոր դասակարգի վերացումը: Մեր յերկրի բանվոր դասակարգն արդեն մեծ հանապարհ է կտրել կապիտալիստական տարրերի վերացման ասպարիզում: Հետեւալ հնդամյակը կլինի այն ժամանակաշրջանը, յերբ կապիտալիստական տարրերի և առևտարակ դասակարգի վերացման հորցը կենանդինի մեր առջև ամբողջ հասակով, ամբողջ ծավալով:

Դասակարգերի վերացման խնդիրն իրականացնելու գործում բանվոր դասակարգը կառարում է հատուկ դեր: Վորպես տիրող դասակարգը բանվոր դասակարգը զեկավարում է ամբողջ սոցիալիստական շինարարությունը, ներառյալ կապիտալիստական տարրերի վերացումը և մանր-գյուղացիական տնտեսության վերափոխումը սոցիալիստական պատմանդանի վրա: Ավելին՝ ինքը բանվոր դասակարգն այդ պայքա-

րի ընթացքում, սոցիալիստական կառուցման ընթացքում վերադաստիարակվում է, իր միջից գատելով սոցիալիզմի ավելի ու ավելի շատ թվով ակտիվ ու գիտակից շնարարներ, կոփելով իրեն կապիտալիստական տարրերի դեմ մղվող պայքարում, ինչպես իր շրջանում, այնպես ել աշխատավորական մասսայում բուրժուական և մանր-բուրժուատիկան տրամադրությունները հաղթահարելու համար մղվող պայքարում:

Այժմ մեր գյուղացիության մասին, ալելի ճիշտ՝ գյուղացիության աշխատավոր մասսայի մասին, քանի վոր գյուղի կապիտալիստական տարրերի հարցը մենք դրինք վերեւում:

Գյուղացիության գրության մեջ Հոկտեմբերյան հեղափոխությունից իվեր կատարվել են արմատական փոփոխություններ, վոր չի կացելի չտեսնել: Առանձնապես և ամենից առաջ վերաբերում և գյուղ կուտական մասաներին:

Զնայած այն հանգամանքին, վոր աշխատավոր գյուղացիությունը ըստել և համատարած կոլեկտիվացման ուղին ընդամենը 2 ու կես տարի սրանից առաջ, մեզ համար պարզ է, վոր նա արդեն վերջնականապես վոտք և գրել սոցիալիզմի ճանապարհը: Կուլակի դեմ, բանվոր դասակարգի ղեկավարությամբ մղած պայքարում, կոլտնտեսականները, —իսկ դրանց թիվն արդեն միլիոնների յև հասնում—իրենց վճռական մասսայով հաստատապես կանգնել են սոցիալիզմը կառուցողների շարքերում:

Նրանք իհարկե լամ հեշում են, թե ինչ եյին մինչեւ Հոկտեմբերյան հեղափոխությունը: Նրանք չեն կարող մոռանալ, վոր բուրժուազիայի կալվածտերերի իշխանության որոք իրենք այն տարրն եյին, վորին անողոքաբար շահագործում եյին, հարստահարում, վորի զլիին մահակը ձեռքներին կանգնած եյին ուրյաղնիկները, զեմսկի նաչալնիկները, նրանք այն տարրն եյին, վոր հաճախ գտնվում եյին տերտերների և այլ «հոգերոր հայրերի» հանկերում:

Համեմատելով իր գրությունը բանվորների կիսաքաղցր գրության և զործազուրկների կենսապարհանների հետ կապիտալիզմի տիրապետության որոք, չիմանալով իր կյանքի բարեկալման ճանապարհները, գյուղացին ամուր կպած եր իր մանր սեփականությանը, այդ հողի վրա մշակելով ամենաամուր մանր—սեփականատիրական սովորույթները:

Եերկրորդ հնդամյակի ժամանակաշրջանում գյուղի ամբողջ աշխատավոր մասսան կընդգրկի սոցիալիստական վերակառուցմամբ, կոլեկտիվիզմի պատվանդանի բարձր մեջնաւական տեխնիկայի պատվանդանի վրա կատարված տնտեսության վերակառուցմամբ: Այս բանը չի կարող կատարվել սահուն ու ինքնահոս կերպով—այս կարող ետեղի ունենալ

12712.57

միայն դաժան պայքարով՝ ընդդեմ կառիտալիդմի մնացորդների՝ դյուզում, միայն պայքարով՝ հանուն կոլտնտեսությանների կազմակերպէ չական-տնտեսական ամրապնդման և դրանով իսկ այն պայքարով, վոր մղվելու յե յերեկվա մանր-սեփականատերերին և այսորվա ու վաղվա կոլտնտեսականներին փոխելու և դարձնելու ոոցիալիդմի գիտակից և ակտիվ կառուցողներ:

Մանր-բուրժուական տատանումները գյուղացիության մասսայում գեռես կլինեն, դրանք անխուսափելի յեն առանձին մոմենտներում և առանձին շրջաններում: Այդ տատանումներն առանձնապես դժալ կտաներենց այնտեղ, ուր մեր աշխատանքը թույլ ե, իսկ կոլտկն ու բուրժուական տարրերն ակտիվ են:

Սակայն կարիք չկա ապացուցելու, վոր այժմյան կոլտնտեսական գյուղացիությունը, իսկ մոտակա մի գույզ տարվա ընթացքում արդեն նրա հիմնական մասսան՝ դրանք արդեն նախահեղափոխական շրջանի ժին մենատնտես գյուղացիները չեն: Հեղափոխության տարիների ընթացքում, մանավանդ համատարած կոլեկտիվացման արագ ծավալման տարիների ընթացքում գյուղում տեղի յեն ունեցել խորը փոփոխություններ, և գյուղացին արդեն փոխվել ե, դարձել ուրիշ, հետամնաց, մութ գյուղի ծեծկված աշխատավորից աստիճանաբար ավելի ու ավելի մեծ չափով դառնալով ակտիվ կառուցող-կոլտնտեսական: Այս հիմնան վրա գյուղում աճում են սոցիալիզմի ակտիվ ու գիտակից կառուցողների շաբաթը, այնքան արագ, վոր 2-րդ հնդամյակում, —կարելի յե այս համոդված ասել, —գյուղացիության ամրող աշխատավոր մասսան կիազմակերպվի կոլտնտեսությունների մեջ և դրանով իսկ հասանի չափ դարերի ընթացքում գյուղում իշխող մանր սեփականության վերջը:

Լիովին վերացնել կապիտալիստական տարրերը գյուղում—նշանակում ե ալվարտել համատարած կոլեկտիվացման գործը: Այս կարող ե իրականացվել միայն անշեղ պայքարով կոլակության դեմ, և կոլտնտեսական մասսայի սոցիալիստական վերադաստիարակման, կոլտնտեսություններում պրոլետարական կարգավահության ամրապնդման, կոլտնտեսականների աշխատանքի կազմակերպումը վճռականորեն բարեկարգելու համար մղվող պայքարում: Այդ պայքարի կազմակերպումը կոմկուսակցության դեկապարությամբ—հենց այս ե, մեր գլխավոր գործը գյուղում: Այս գրոշի տակ մղվող հաջող պայքարի արդյունքը կլինի վոչ միայն կապիտալիստական տարրերի, այլև մանր-սեփականատերական տնտեսության վերացքումը գյուղում: Այս ել հենց նշանակում ե, թե մեր առջև կանգնած ե կապիտալիստական տարրերի և առհասարակ դասակարգի վերացման խնդիրը:

Մեր բանվորը և կոլտնտեսական գյուղացին արդեն այժմ իսկ իրենց մասսայով կանգնած են սոցիալիզմի ակտիվ կառուցողների շաբաթը: Կապիտալիստական տարրերի և ընդհանրապես պասակարգերի լիակա-

առը վերացման խնդիրը միաժամանակ հանդիսանում ե յերկրի ամբողջ աշխատավոր բնակչությանը անդասակարգ սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ շնաբարանների վերածելու խնդիր: Այդ խնդիրի իրականացումը—2-րդ հնդամյակում, անդասակարգ սոցիալիստական հասարակակություն ստեղծելու խնդիրը՝ վերածվում ե գործնական խնդիր: Այդ խնդիրը ծագում ե սոցիալիստական շինարարության արդեն իսկ ձեռք բերած հաջողություններից, սոցիալիզմի կառուցման վերաբերյալ 2-րդ հնդամյակով դրված խնդիրների գումարից:

Պետության վերաբերյալ հարցի առթիվ.

Պետության հարցը հասուկ կերպով չլուսաբանվում մեր թեղիսներում: Յեկ այդ հասկանալի յե:

Դնելով յերկրորդ հնդամյակում գասակարգերի վերացման հարցը, մենք դեռևս վոչ մի զեպօրում չենք կարող և չսետք ե դնենք պետության ավելորդության կամ մահացման հարցը: Ընդհակառակն՝ տվյալ ստագիայում խորքը վերաբերում ե դեռևս պրոլետարական պետության ամրապնդմանը, նրա հզորության ուժեղացմանը:

Այս բանը բղխում ե դեռևս մեր առաջ կանգնած կապիտալիստական առարկերի վերացման, բուրժուական տարրերի կողմից բանվոր դասակարգի իշխանության դեմ ուղղված ամեն տեսակ հակահեղափոխական յելույթների կանուցման խնդիրներից, նոր պատվանդանի վրա վերակայի գյուղացիական մասսայի և, ամբողջությամբ առուցվող աշխատավոր մասսայի վերակառուցման վերաբերյալ ահազին կազմակերպչական գաստիարակչական խընդիրներից:

Ավելորդ ե խոսել այն մասին, վոր արտաքին կապիտալիստական շրջալաւման գոյության պայմաններում ուղղացունիզմի ամենավատթար տեսակը կլիներ պրոլետարական դիկտատուրայի հզորության վորեն թուլացում: Կառուցվող սոցիալիզմի յերկրի և կապիտալիստական աշխարհի միջև աստիճանաբար սրվող հակասություններից կարելի անել միակ հետեւթյունը—ամեն կերպ ուժեղացնել պրոլետարական պետությունը, վրապեսդի բարձրացվի նրա ուժը, վոչ միայն ներքին դասակարգային թշնամու համամատությամբ, այլև իմպերիալիզմի՝ նրան թշնամի ուժերի համեմատությամբ:

Այս հարցի, ինչպես և մեր յերկրում սոցիալիզմի կառուցման բարը արմատական խնդիրների լավագույն պարզաբանումը հանդիսանում ե այն հիմնական դոկումենտը, ինչպիսին ե Լենինի «Պետություն և հեղափոխություն» գիրքը: Մարքսի և Ենդելտի թողած համագուտախան ըրական դոկումենտների հետ միայն, այս գիրքը հանդիսանում ե այն բանալին, զորի ոգնությամբ կարելի յե հասկանալ մեր չինարարության արմատական խնդիրները, մասնավորաբար յերկրորդ հնդամյակը նկատմամբ:

Հենինը մանրամատնաբար պարզաբանում է կոմունիստական հառարակության սոսածին, ստորին Փաղի (սոցիալիզմի) առանձնահատկությունները, այն Փաղի, վոր մենք արդեն թևակոխել ենք, բայց վորը դեռևս չի վերջանում 2-րդ հնդամյակում։ Այդ Փաղի—սոցիալիզմի Փաղի, բորոշ առանձնահատկությունը հանդիսանում է այն հանդամանքը, վոր պահպանվում են դեռևս բուրժուական պետության մնացորդներն այսպես կոչված «բուրժուական իրավունքի» ձևով։

Ահա թե ինչ ե ասված այդ առթիվ Լենինի «պետություն և հեղափոխություն» գրվածքում։

«Հավասար իրավունք», —ասում ե Մարքսը, —մենք այստեղ իսկապես ունենք, բայց դեռևս «բուրժուական իրավունքն ե», վորը, ինչպես և յուրաքանչյուր իրավունք, յենքադրում է անհավասարություն։ Յուրաքանչյուր իրավունք միանման մասշտարի կիբառումն է զանազան մարդկանց նկատմամբ, վորոնք իսկապես միանման չեն, հավասար չեն իրար, ուստի և «հավասար իրավունքը» հավասարության խախտումն է և անարդարություն։ Ցեղ իսկապես, ուրիշներին ել տրված հասարակական աշխատանքի բաժնին հավասար իր աշխատանքը կատարելով՝ յուրաքանչյուրն ստանում է հավասար բաժին հասարակական արտադրությունից (բացմուռթյամբ մատնանշված պահումներից)։ Մինչեւ առանձին մարդիկ հավասար չեն—մեկն ուժեղ ե, մյուսն ավելի թույլ, մեկն ամուսնացած ե, մյուսը՝ վոչ, մեկն ավելի շատ յերեխաներ ունի մյուսը՝ քիչ և այլն։

«...Կատարելով հավասար աշխատանք, —յեղբափակում ե Մարքսը, —հետեւապես հավասար կերպով մասնակցելով հասարակական սպառողական Փոնդին, մեկն ստանում է իսկապես ավելի, քան մյուսը, նրանից հարուստ դուրս կդա և այլն։ Սյս բոլորից խուսափելու համար իրավունքը, փոխանակ հավասար լինելու, պետք է լինի անհավասար»։

Հետեւաբար՝ արդարությունն ու հավասարությունը դեռևս չեն կարող տալ կոմունիզմի առաջին Փաղը, կմնան հարստության վերաբերյալ տարբերությունները՝ անարդարացի տարբերությունները, բայց անկարելի կլինի մարդու շահագործումը մարդու միջոցով, վարովհետեւ չի կարելի ճեռք դցել և մասնավոր սեփականություն դարձնել Արտադրության միջոցները՝ շործարանները, մեքենաները, հողը և այլն։ Զարգացնելով հասսալի մանր բուրժուական վոչ պարզ ֆրազը «հավասարության» և առհասարակ, արդարության մասին՝ Մարքսը ցույց է տալիս կոմունիստական հասարակության գարզացման լիքացք, վարպիսի հասարակությունը հարկադրված է նախ վոչնչացնել միայն այն «անարդարությունը», վոր արտադրության միջոցները համաշտակված են առանձին մարդկանց կողմից, և վորն անկարող է միանդամից վոչնչացնել նաև հետագա անարդարությունը, վոր կայանում է սպառման առարկաներն «ըստ աշխա-

տանքի» (և վոչ թե ըստ պահանջների) բաշխելու մեջ։ (Լենին, հատոր 14, մաս 2-րդ, էջ 372—373։ ընդգծումը բնադրինն ե)։

Այսուհետև Լենինն ընդգծում է, վոր նույնիսկ կապիտալիստական տարրերի և ընդհանրապես գասակարդերի վերացումից հետո, պետությունը կսկսի մահանալ միայն աստիճանաբար, տեսական ժամանակաշրջանի ընթացքում։

«Պետությունը մահանում է, քանի վոր կապիտալիստներ արդեն չկան, գասակարդեր արդեն չկան, ուստի և վորեւ դասակարդի նիշել անհար է։ Բայց պետությունը դեռևս չի մահացել բոլորովին, վորովհետեւ մնում է վաստական անհավասարությունը նվիրագործող «բուրժուական իրավունքի» պահպանումը։ Պետության լիակատար մահացման համար հարկավոր և լիակատար կոմունիզմ»։ (ընդգծումը բնադրինն ե)։ (Լենին. 14-րդ հատոր, մաս 2-րդ, էջ 374)։

Պարզաբանելով պետության զերը պլրոլետարական հեղափոխությունից հետո՝ Լենինը մատնանշում է Ենդելսի հայտարարությունն այն մասին, վոր «կոմունան արդեն պետություն չեր իսկական իմաստով»։ Լենինն ասում է նաև, վոր պլրոլետարական պետությունը կիսապետություն է. այսինքն՝ իր հիմքում տարբերվում է բուրժուական պետությունից՝ փոքրամասնության (շահագործվողների) տիրապետությամբ։ Հակայական մեծամասնության (շահագործվողների) նկատմամբ։ Իր հերթին պլրոլետարական պետությունը բանվոր դասակարդի տիրապետության, պլրոլետարական զեմուկրատիայի զարգացման, այսինքն՝ քաղաքի և դյուղի աշխատավոր մասսայի կողմից ամբողջ սոցիալիստական զինարարությանը ցույց տրվող՝ հետզհետեւ ավելի ու ավելի ակտիվ մասնակցության կազմակերպությունն է։

Լենինի և Մարքսի վերը իրաված խոսքերում ընդգծվում է անհավասարության առկայությունը հասարակության մեջ, նաև բուրժուակայի իշխանության տապալումից հետո։

Սոցիալիստական հեղափոխության առաջին խնդիրը հանդիսանում է մարդու կողմից մարդուն շահագործելու հասարավորության վերացումը, այսինքն արտադրության միջոցները մասնավոր սեփականատերերի կողմից խլելու հնարավորության վերացումը։ Բայց անհավասարությունը հասարակության մեջ դրանից հետո ել զեռ յերկար մնում փորովհետեւ կիրառվում են տարբեր չափանիշներ, տարբեր մարդկանց փակումները կայանում են պահպանական պայմաններում, վորոնք իրար հարկադրված չեն վախճան միանման պայմաններում։

Այդ անհավասարությունը վոչնչացվում է վոչ մեկ անդամից։ Այդ անհավասարությունը չի կարող վոչնչացվել, քանի զեռ կմնա այսպիս կաշված «բուրժուական իրավունքի» կիրառման անհամարժեշտությունը, իրավունքը, վոր կապման և առարկաներն «ըստ աշխատանքի» (և վոչ թե

ըստ պահանջների) բաշխելու մեղքունքից : Պետությանը մնում է «Պահանջնել փաստական անհավասարությունը նվիրագործող» բարժուական իրավունքը :

Սակայն, պրոլետարական պետության հիմնական տարրերությունը բուրժուական պետությունից այն է, վոր «իրավունքը» պրոլետարական դիկտատուրայի պայմաններում պաշտպանում և աշխատավոր մեծամասնության շահերը և ուղղված ե զեսի պրոլետարիատի թշնամի դասակարգային տարրերի ճնշումը : Այս պատճառով բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավոր մասսայի առաջ տվյալ ստադիայում կանգնած ե պրոլետարական դիկտատուրայի ամբազնդման խնդիրը, պրոլետարական պետության հղորության ուժեղացման խնդիրը : Միայն այս պայմանով և հնարավոր կապիտալիստական տարրերի և առհասարակ դասակարգերի լիակատար վերացումը, հետևածեն և անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումը, վորի գարդացման ընթացքում աստիճանաբար կմահանա պետությունը :

Այժմ կանցնեմ քաղաքի և զյուղի փոխհարաբերությունների հարցին, թե ինչպես են նրանք դասավորվում 2-րդ հնդամյակի հեռանկարներում : Սակայն նախքան այդ, մեջ կըմբեմ այն, ինչ ասել է Ենթելս այդ առթիվ «Բնակարանային հարցի մասին» հոդվածում : Ահա նրա խոսքըը .

«Ամենաղուտ ուսուպիտ յե հանդիսանում ժամանակակից բուրժուական հասարակությունը վերափոխելու ցանկությունը, գյուղացիությունը վորակ այդպիսին պահպանելու ցանկության կողքին : Միայն բնակչության ըստ հնարավորին ավելի համաչափ բաշխումը ամբողջ յերկում, միայն ինդուստրիայի սերտ կապը հողագործական արտադրության հետ ու դրա կողքին հաղորդակցության միջոցների անհրաժեշտ ընդարձակումը—արտադրության կապիտալիստական յեղանակի վերացման պայմաններում, վորը նախադրյալ ե, —ի վիճակի յե հանել գյուղական բնակչությունն այն մեկուսացումից և բժությունից, վորի մեջ համարյա անխախտ քարշ և գալիս հաղարամյակների ընթաքումքում» :

Սրան համապատասխան հետևություն է արված մեր թեղիներում : Թեղիներում մատնանչչում ե, վոր 2-րդ հնդամյակի խնդիրների իրագործումը նշանակում է առեղծել պայմաններ՝ «Հակառակությունը քաղաքի և գյուղի միջև վերացնելու համար» :

Սակայն այսուղ կարեռ ե կանդ առնել այդ հակառակության վերացման ճանապարհների վրա : Մեկ կողմից՝ այդ կախված ե քաղաքից, ինդուստրիայից և այլն : Մյուս կողմից՝ այդ կախված ե նոր, կոլտնտեսության հիման վրա (տվյալ ստադիայում—արտելային ձևով) վերակառւություն գյուղից :

Անհրաժեշտ է առանձնակի իրանդ առնել այն ճանապարհների վրա, չ2

վորոնցով ընթանում է մեր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը : Հայտնի յե, վոր այդ վերակառուցումը տեղի յե ունենում կոլեկտիվացման պատվանդանի վրա : Հայտնի յե նաև, վոր կոլանտեսությունները կոռպերացիայի այլաձեռություններից մեկն են, այն և՝ կոռպերացիայի բարձրագույն ձևը, նրա արտադրական-սոցիալիստական տիպը : Կոլտնտեսության տարբերությունը պետական-սոցիալիստական ձեռնարկություններից ունի հսկայական-քաղաքական և պրակտիկ նշանակություն :

Կոլտնտեսության կոռպերատիվ հիմունքը նրա արտելային ձևով, կոլտնտեսության մասնակցելու կամավորությունը և գրահետազոտության աջակցությամբ և նրա գեկավարությամբ կոլեկտիվ տենտեսության համար նոր ու բարձրագույն տեխնիկական պատվանդան ստեղծելը առավելագույն չափով հեշտացնում են գյուղացիական մասայի անցումը (հենց իրենց՝ կոլտնտեսությունների դարձացման մի շարք աստիճաններով) գեղակի սոցիալիզմ : Այս բվառում է հայտնի՝ լենինյան կոռպերատիվ պլանից :

